

ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՆԻ
ՆՈՐԵԳԻՒՑ ԽՈՍՔԵՐԻ.

* * *

Լոնգոնում այս օրերս լոյս է տեսել մի փոքր գրքայի, որ խիստ հետաքրքրական է ամրող քրիստոնեայ աշխարհի համար: Այդ գրքոյիը մի ձեռագիր պատիրուսի հրատարակութիւն է, որ գըտել են Եգիպտոսում: Գրենֆելլ և Գենտ գիտնականները և որը պարունակում է իւր մէջ Փրկչին վերադրած խօսքեր: Այդ պատիրուսի երկու երեսի վերայ գրած են ուժ խօսք, որոնցից չորրորդը և ուժերորդը կտրտուած ծայրերին գրած լինելով՝ անչնարին է եղել նոցա իմաստը վերականգնել: իսկ հինգերորդի մէջ մի քանի բառ պահած է: մնացեալներն են:

1. . . . «Ե այն ժամանակ պարզ կտեսնես, ինչպէս հանել շիւղը քո եղբօր աչքից»:

2. «Յիսուս ասում է. Եթէ չէք պահում դեպի աշխարհը, (այս գարձուածքը յունարէն բնադրի մէջ շատ մմին է, անզիւերէն թարգմանիչը կարծում է, թէ այդ նշանակում է՝ հրաժարուել աշխարհից), դուք բնաւ չէք գտնի Աստուծոյ Արքայութիւնը, և եթէ դուք չէք պահում շարաթը, դուք չէք տեսնի Հօրը»:

3. «Յիսուս ասում է. Ես կանգնած էի աշխարհի մէջ, և նոքա ինձ տեսան մարմնով, և Ես գտայ բոլորին հարբած և ոչ ոքին նոցա մէջ շգտայ Ես ծարաւի, և Իմ հոգիս ցաւում է մարդկանց որդոց համար, որովհետև նոքա կոյր են իւրեանց սրտերով»:

5. «Յիսուս ասում է. Ուր . . . և այնտեղ . . . մէկը, Ես նորա հետ եմ: Բարձրացրու քարը և դու կդանես ինձ, ձեղքիր ծառը և Ես այնտեղ եմ գտնուում»:

6. «Յիսուս ասում է. Մարդարէն չի ընդունուում իւր հայրենիքում, ինչպէս և բժիշկը չի կարող բժշկի նոցա, որոնք նորան ճանաչում են»:

7. «Յիսուս ասում է. Քաղաքը, որ շինուած է բարձր բլուրի գագաթի վերայ և հաստատուած, շի կարող ընկնել կամ ծածկուած լինել»:

Սոցանից երեսում է, որ մի քանիսը այս խօսքերից համեմատ են աւետարանի խօսքերին, իսկ միւսները միանգամայն նոր են:

Գիտնական հրատարակիչների Ենթագրութեամբ գտնուած ձեռագիրը երկրորդ գարի վերջերին գըրած պէտք է լինի և Քրիստոսի խօսքերի մի անյայտ ժողովածուի մի մասն է կազմում»:

Գրքոյիը հրատարակուած է երկու տեսակ՝ մէկը լատինական և միւսը յունական տառերով. դորան կցած է և անզիւերէն թարգմանութիւնը շատ կարեոր ծանօթութիւններով:

* * *

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐԹՆԵԿԱՌՆ

* * *

ԿԱԹՈԼԻԿԱԿ ԵԿԵՂԵՑԻ:

Սրբացման կարող կարողի եկեղեցու մէջ. — Մեզանից իւրաքանչիւրը կարդալով այս վերնագիրը պիտի մտածի. Բնչ կարգ. եթէ մարդը սուրբ և առաքինի կեանք է ունեցել, չի խնայել ոչինչ եկեղեցու քրիստոնէութեան համար: Կամ չարչարուել ու մահ է ընդունել Յիսուսի անուան համար: Նա արդէն սուրբ է: Կաթոլիկ եկեղեցին գործին այնպէս չի նայում: Նա սրբացման գործի համար որոշ կանոններ է դրել, գրագրական յայտնի արարողութիւններ սահմանել, թղթեր ու քննութիւններ: Որոնք պիտի վաւերացուին կնիքներով ու մարկաներով և պիտի վճարուին որոշեալ գումարներ, նայելով թէ թուղթը ինչ կարեւութիւն ունի: Ուրեմն մարդուն սրբոց կարգը մտնելու համար անհրաժեշտ է մի պատկառելի գումար առ նուազն 2,000,000 ֆրանկ: Այն ոսկին, որը նա գուցէ արհամարհել է կենդանութեան ժամանակ, նրան սրբոց կարգը գասելու ամենաշական պայմանն է հանդիսանում: Սրբացման գործի համար 500 սոկի պէտք է զմարել Աւտիկանին, 1000 սոկի հանդիսակատարութեան համար, բոլոր բարձրաստիճան հոգևորականները իրենց բաժինը պիտի ստանան առատութեամբ, բայց այդ շատ չնշին բան է. զիսաւոր ծախսը „Promotore delle fede“-ի վերայ է գնում: Դա մի տիտղոս է, որ տրուում է այն անձանց, որոնց պաշտօնն է հաւաքել և ի ըստ ընծայել սրբացուի վարքին ու առաքինութեան վերայ ստուեր ձգող իրողութիւններ: Դրանց նաև լազիր անուանում են: Կեկի փաստաբաններ, իսկ եկեղեցին կոչում է «հաւատոյ դատախազներ», Ոչ միայն այդ քրոմուու-ները առատ վարձատրուում են, այլ և նոցա օգնականներն ու ծառաները, Սրբացման գործը շատ ծանր է յառաջ գնում և իւրաքանչիւր քայլ միայն փողի ուժով է կատարուում: Շատ անգամ պատահում է, որ թեմը կամ հասարակութիւնը, որ աշխատում էր այս կամ այն անձի սրբացման համար, ընդհատում է նուիրատուութիւնը, այն ժամանակ նոցա կանդիտատի թղթերի վերայ գրուում է „ad huc dormiant“ մինչև այժմ քննում է: Ոչ միայն ընտանիքներ, այլ և հասարակութիւններ և թեմեր նիւթապէս քայլքայում են, մինչև որ իրենց ընտրեալին սըրբոց կարգն են հասցնում:

Վատիկանի օրէնսգրքում մանրամասն որոշուած է սրբացման գործունեութեան կարգը: Երբ մի թեմում մեռնում է առաքինի անձն, և ժողովուրդը ընտրում է նրան իրենց համար սրբացու, թեմի եպիսկոպոսը հոգևորականներից ժողով է կազմում և քննուում են հանդուցեալի անցեալը.

դա առաջին աստիճանն է, և իրողութիւններ հաւաքելուց և ստուգելուց այն կողմը չի անցնում։ Այս տեղ portulatore-ը, այսինքն միջնորդը ծրարը յանձնում է շարարողական ժողովին։ Ժողովականները բաց են անում ծրարը, եթե փաստաթղթերը ընդունելի համարուեցան անուանում են սրբացուին։ Բոլոր թղթերը ուղարկուում են շարարցան ժողովի երկու հաւատարմատարներին, որոնցից մինը եպիսկոպոս պիտի լինի։ Աերջիններս մեծ զգուշութեամբ քննում և համեմատում են թղթերը, կազմում են սրբացուի սիրածործութեանց և հրաշքների ցանկը. ուսումնասիրում են նորա շարարութիւններն՝ արդեօք կաթոլիկ եկեղեցու վարդ. գեմ բաներ չկա՞ն, և ի վերջոյ իրենց դիտողութեամբ հանդերձ ուղարկում են թղթերը «հաւատոյ դատախազին»։ Սորա գործն է և իւր պաշտօնը աւելի մեծ ուշադրութեամբ քննութեան ենթարկել բոլոր թղթերն ու վկայութիւնները, քննել նորա վարդապետական սկզբունքները, կեանքը, գործերն և հրաշքները և որ զլուաւորն է, գտնել ինչ ձանապարհով էլ լինի հակառակ և հակառող գեպքեր ու վկայութիւններ։ Ահա այստեղ ոսկին և ամեն բան անողը. այս վեհիջն քննութիւնը քաշում է տասնեակ տարիներ և տասնեակ հազար ոսկիներ հաղիւ կարողանում են սրբացուի երեսը պարզ գուրս բերել գեկի փաստարանի ձեռքից։ Քննութիւնը վերջացնելուց յետոյ թղթերը ուղարկուում են դարձեալ շարարողական ժողովին։ Հանդիսաւոր ժողով է գումարուում և պառմոտուի բացատրութեան համեմատ և որոշումն է արուում։ Նմէ վերջինս սրբացան արժանի համարեց, ժողովը սրբացուին տալիս է Երանելիս անունը և սկսում է ձեւականութեան մի երկար շարք, որ տեսում է դարձեալ տասնեակ տարիներ, և անվերջ դրականութեան և երկարաւե վիճարանութեան, մինչև որ չի ստուգուում և պարզում «Երանելու» կենաց բոլոր կողմերը։ Բայց դրանով գործը չի վերջանում, իրը ապացոյց անձի սրբութեան պահանջում են և հրաշքներ ամենաքիչը երկու հրաշք մի աստիճանից միւսը անցնելու համար։

Աերջապէս այս գրագրութիւնն էլ վերջանում է. հաւաքում են արարողական ժողովի անդամ կարդինալներին, գալիս է և պապը, լսում է Երանելու գործերի, ծառայութեանց, հրաշքների մանրամասն զեկուցումն՝ ապա յայտնում ժողովականաց, որ մի քանի օր պիտի աղօթել որ Աստուած լուսաւորի նորա միտքը վերջին վճռական խօսքը ասելու համար և հեռանում է, Այս վերջին մի ձեւկանութիւն է, որովհետև երր պապը կարդինալների ժողովում զեկուցումը լսում է՝ արդէն գործը վերջացած պիտի համարել. պատրաստուում է պապական կոնդակը, որոշուում է հանդիսի օրը և պապի ստորագրելուց յետոյ հրատարակուում է բոլոր կաթոլիկ աշխարհներում։

ՈՒԽԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

— Խերսոնի և Օգեսսայի վիճակաւոր Առաջնորդ Յուսումն արքեպիսկոպոսը մի յայտարարութեամբ յանուն Ռուսաց Սիրացան Սինօդի յայտնում է հետեւեալ բժշկութեան գեպքը, որ տեղի է ունեցել անցեալ տարի սրբոց գաւը դասուած Աւգւստի Թէոդոսի եպիսկոպոսի Նշանարաց վերայ։ Ծառնդիստ կոչուած աղանդաւորներից ումանք՝ Լուսի քարոզիչներից, որ նոր սրբի մարմննը անփուտ է մնացել, ցանկացել են տեսնել այդ Նշանարները։ Այս պատճառով կազմուում է մի ուխտագնացութիւն գեպի սուրբը. սկզբում 19 հոգի են լինում որոնցից հինգը աղանդաւոր, իսկ մնացածները նորագարձներ, ճանապարհին միանում են դոցա 80-ի չափ այլ ուխտաւորներ, որոնց մէջ և շատ հիւանդներ, ի միջի այլոց էր Գեօդրով անունով մէկը, որ երկու տարուց աւելի ջղային հիւանդութեամբ տանջուում էր և որի հիւանդութիւնը երբեմն կատաղութեան էր համուում ճանապարհին Գեօդրովի հիւանդութիւնը այնքան է սաստիկանում որ նորա կնոջ ասելով երբէք այդպիսի ծանր վիճակի մէջ չէր եղել նաև Երբ տեղ են համուում, հիւանդին ձեռների վերայ բարձրացրած հազիւ 8—10 մարդ կարողանուում են ներս տանել տաճարը, ուր սրբի գամբարանն էր, Բայց հենց որ հիւանդին համրուրել են տալիս գերեզմանը, նա իսկոյն հանգստանում է և մի տեսակ թմրութիւն է գալիս վերան, Քահանան աղօթք է կարգում զլիին, հիւանդը համրուրում է մասունքը և միանդամայն բժշկուում է իւր հիւանդութիւնից և փառարանելով Աստուծուն և իւր շնորհակալիքը յայտնելով՝ սրբի բարեխօսութեան համար մի քանի օր մնում է այնտեղի Ազանդաւորները տեսնելով այդ հրաշքը ցանկութիւն են յայտնում դառնալ իւրեանց օրթոգորս եկեղեցւոյ ծոցը և արժանանում են Գեօդրովի հետ ի միասին ս. Հաղորդութեան խորհուրդը ընդունելու։

— Սիրիիիայի հեթանոսների և մահմեդականների մէջ քրիստոնէութիւն տարածելու գործը գանգաղ է առաջ գնուում։ Սորա պատճառը տեղական քարոզիչները վերագրում են այն հանգամանքին, որ այդ ազգերի մէջ բաղմահնութեան և բաշլդդ, կոչուած սովորութիւնը կայ, Կիատուած է, որ կանայք առ հասարակ աւելի գժուարութեամբ են լնդունում քրիստոնէութիւնը, քան տղամարդիկ. մինչեւ անգամ կանայք արգելք են լինում տղամարդկանց մկրտուիլ սպառնալով, թէ կըրաժանուին նոցանից, պատահում է և այնպէս, որ քրիստոնէայ գարձած տղամարդու երեխայքը անկնունք են մնում կանանց դիմադրութեան պատճառով, մանաւանդ աւելի աղջիկների վերաբերութեամբ, Այս վերջին գեպքում իւրեանց հեթարկուում է բոլոր կաթոլիկ աշխարհներում։

նոս կանանց համամիտ են լինում նաև քրիստոնեայ տղամարդիկ այն յուսով, որ ազջիկներին անկնունք թռողնելով ժամանակին աւելի հեշտութեամբ մարդու կրտան նոցա հեթանոսներին և առատ բաշլը կառնեն։ Այս Ենտ.՝ առաջ բերելով այս անրնական սովորութիւնները, որոնք արգելք են լինում քրիստոնէութեան ազատ տարածուելուն, առաջարկում ե օրէնքով արգելել այդպիսի վկասակար սովորութիւնները և ազատել քարոզչաց ապարդիւն աշխատութիւնից։ առաջ նոցա կանոնաւոր գործունեութեան յարմարաւոր միջոցներ և վերացնելով հակաքրիստոնէական սովորութիւնները, որոնք խոչընդուռ են լինում նոցա համար։

— Ժողովրդական լուսաւորութեան նախարարի զեկուցման համաձայն յունիսի 13-ին Թ. Վ. Գ. Ա. Ա. Խ. Կ. Ա. Ս. Ս. Բ. բարեհամեցաւ թոյլ տալ Ռուսաց հոգեորդանոցներին առանձին քննութեամբ մտնել Եւրիեվի (Դորպատի) համալսարանի բոլոր բաժինները, բացի Աստուածարանական բաժնից։ Արդէն դպրանոցական դասընթացքը աւարտողներին թոյլ էր տրուած մտնել Աշարշավայրի համալսարանի պատմական—լեզուաբանական և բնական—մատեմատիքական բաժինները և Տումսի համալսարանի բոլոր բաժինները։ այժմ Եւրիեվի համալսարանի գուներն էլ բացուեցան նոցա առաջ, Խոկ միւս համալսարաններ մտնել ցանկացողները փոխանակ առանձին քննութեան, պարտաւոր են ձեռք բերել զիմնազիկական հասունութեան վկայագիր։ Անշուշտ հետպհետէ այդ արգելքն էլ կըվերանայ և Ռուսաց հոգեորդ դպրանոցներից ընթացաւարտների իրաւունքները կըտարածուին բոլոր համալսարանների վերաբերյալ հաստատութեան մէջ։ Մըտնողները կըննաւին բուռնութիւն, որին մեծ պատուով ընդունեց Անդիկան եկեղեցին։ Խոկ Խեմարանի առաջուածաւուչը յայտարարել է, որ առաջիկայ 1897—98 ուսումնական տարուայ սկզբին 20—25 դպրանոցական ընթացաւարտներ պէտք է ընդունուին վերջիշեալ հաստատութեան մէջ։ Մըտնողները կըննաւին Ռուսաց և դասական լեզուներից։

— Ա. Պետերբուրգի պատմական—լեզուաբանական ճեմարանի առաջուածաւուչը յայտարարել է, որ առաջիկայ 1897—98 ուսումնական տարուայ սկզբին 20—25 դպրանոցական ընթացաւարտներ պէտք է ընդունուին վերջիշեալ հաստատութեան մէջ։ Մըտնողները կըննաւին բուռնութիւն, որին մեծ պատուով ընդունեց Անդիկան եկեղեցին։ Խոկ Խեմարիչի և Օքսֆորդի համալսարանները իրեանց կողմից պատուաւոր գոկտորի աստիճանը շնորհեցին, Այս փառաւոր ընդունելութիւնը և սիրալիք յարշակները Սրբազնանին ցոյց տալով, Անդիկան հոգեորականութիւնը իւր մեծարանքը ընծայեց մի եկեղեցւոյ, որ արեկեան եկեղեցիների մէջ մըուու առաջինն է։

— Ռուսաց Սինօդը յանձնարարել է Ա. Պե-

տերբուրգի ուսուցչապետ Ա. Մ. Պողոսեներին կազմել մի ճշգրիտ այրբենարան Դ. ալմուխ լեզուի համար և պատրաստել մաներամասն հրահանգ թարգմանիչների համար, նոյնպէս և յանձն առնել քննել և ի լոյս ընծայել այնպիսի Դ. ալմուխ լեզուով, որ յարմար գայ ներկայումն այդ ցեղի մէջ գործող միասինարան ների քարոզութեանց։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ...

— Յունիսի 8-ին սկսուեցան Վիկտորիա թագուհու վաթուունամեայ թագաւորութեան յորելեանի տօնախմբութիւնները մեծաշուք հանդիւներով։ Անդիկայիք ամենայն իրաւամբ պարձենում են իւրեանց թագուհու վաթուունամեայ տիկին է։ Սորա կրօնասիրութիւննը և ապինական բարեհամանութիւնները ջատագովութեան առարկայ եղան ոչ միայն լայնածաւալ Անգլիական պետութեան ըոլոր խաւերի մէջ, այլ և արձագանք գտան ամբողջ աշխարհի մէջ, ուր Ալեգարդ թագուհին հիացման և խորին յարգանաց ու մեծարանաց արժանացաւ ամենքից։ Հեշտ բան չէ 60 տարի անսաման բազմած մնալ Աբբայական Աթոռի վերայ և մանաւանդ թէ՝ օր աւուր տեսնել իւր ազգի յառաջազիմութիւնը և հետզհետէ աճող հզօրութիւնը, թագուհու աչքի առաջ քանի քանի սիրունդներ են փոխաւել և ինքն է եղել միայն, որ իւր մեծ հանձարով և առաքինի կեանքով ամենքի համար բարի մայր է մնացել տանհակ տարիների ընթացքում։ Հասկանալի է ուրեմն, որ թագուհին խորին ակնածութեան և որդիկական խոնարհ յարգանաց և սիրոյ մի շաղկապ է ներկայանում ամեն մի անդիկացու համար։ Շատ ուղիղ է նկատել մէկը, թէ անդիկացին երկու սրբութիւն ունի՝ Աստուածաշունչ և Թագուհի։ Ահա մի ժողովրդականութիւնն որ ձեռք է բերած անկեղծ և առաքինի կեանքով և Աստուածապարդե հանձարով։

Տօնախմբութեան առաջին օրը բոլոր կրօնների և աղանդների ներկայացուցիչները մեծաշուք եկեղեցական պաշտամունքներով սկզբան զրին շքեղ հանդիւններին։ Պալատի եկեղեցւոյ ժամասացութեանը ներկայ էր Թագուհին իւր մեծաւորների հետ ի միասին, որոնց շնորհաւորութիւնները ընդունելու ժամանակ, ամենքին գուրգուրանքով համրուց։

Տօնախմբութեան հանդէսների մէջ շատ հանգիստուր էր Թագուհու գնացքը յունիսի 10-ին դէպի ս. Պողոսի եկեղեցին, ուր ներկայ եղաւ ս. Պատարագին, Այս փառաւոր և շքեղ գնացքը խիստ մեծ կարգապահութեամբ անցաւ, շնորհելով փողոցներում խոնուած միլիոնաւոր ժողովրդական, որոնք անհամբեր սպասում էին տեսնել իւրեանց Սիրեցեալ Թագուհու վոյնին Պալատից գործ գալուց առաջ Թագուհին ուղեց ազգին հետևեալ հակիրճ

և միանգամայն սրտաշարժ հեռազբական տողերը՝ մի բոլոր սրտեւ չնորհակալ եմ իմ սիրեցեալ ազդից. թող օրհնէ նորան Տէրը», և յս խօսքերը իսկոյն հեռագրական թելերով սլացան դէպի Մեծին Անդլիայի հեռաւոր երկիրները և ամեն տեղ նոյն ողեռութեամբ և ցնծութեամբ ընդունուեցան:

Լրադիրները հաղորդում են, որ Թագուհւոյ յորելեանի հանդեսները Հնդկաստանում առիթ եղան անկարգութիւնների, որոնց խաղաղացնելու համար մի քանի տեղերում հարկ եղաւ զօրքի միջամտութեանը գիմել, և յս հանգամանքը տեղական ժանտախտի և սովի հետևանք էին աւելի, քան ժողովրդական ցոյց ընդգեւ Թագուհւոյ, թէեւ եղան մարդիկի, որոնք կամեցան ժողովրդի արամադրութիւնից օգուտ քաջել և մի ընդհանուր տրտունջ արտայայտել կառավարութեան դէմ:

Հնայելով այս տիտուր միջադէպքին ամբողջ տօնախմբութիւնը շատ խաղաղ և ընդհանուր ոգեռութեամբ անցաւ և Անգլիացիք մի ազգային մեծ տօն տօնեցին, հրաւիրելով բոլոր աշխարհի համակիր ուշագրութիւնը գէպի այդ հսկայաքայլ յառաջադիմող երկիրը և նորա արժանաւոր գահակալ Վիկտորիա թագուհին, որի շնորհի Անգլիան հասել է իւր ներկայ նախանձելի գրութեանը:

Անգլիայում կայ մի ընկերութիւն, որի նպատակն է զլուխ բերել եկեղեցների միութեան խնդիր, այդ ընկերութեան նախագահն է Լորդ Գալփիաքս, որի զինաւոր ցանկութիւնն էր նախապետական ժողովներու մէկում նայանեց, որ իւր զանքերը ի զուր են անցել պատի բարեկամութիւնը գրաւելու համար, որ և անորոշ ժամանակով յետաձում է կաթոլիկ եկեղեցուն մօտենալու յշոյց, Բայց զրափոխաբէն առանձնապէս մատնացոյց արաւ այն մըտերմական ընդունելութիւնը վերայ, որ Առուաց հոգեորականութիւնը ցոյց տուեց Պետերորոյի եպիսկոպոսին և Լորդի արքեպիսկոպոսին, Լորդի կարծիքով Անգլիան պիտի ձգտի եկեղեցների միութեամբ արևելեան և արևմտեան քրիստոնեաների մէջ մի կապ հաստատել:

Պահպանողական թերթերը հաւանութիւն են տալիս այս բանին և Ալբորդի Անտոնիոս արքեպիսկոպոսի գալուստը բարենշան հանգամանք են համարում, Անտոնիոսը եկել է Լոնդոն Կենտրոներու արքեպիսկոպոսի հրաւերով, ներկայ լինելու անդ հալիսկ. ժողովին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՆԿԵԴԵՑԻ.

Հայաստանին նպատառ գերմանական դաշնակցութեան Բեռլինի կենդրուական յանձնաժողովը պատի մասին և Ալբորդի Անտոնիոս արքեպիսկոպոսի գալուստը բարենշան համարում վարիչներ ֆրանց Ակադրութային կազմութիւնի, որ Պատուին Պատրունիի, որ Պատուին է Յաղացէր, որ Պատուին է Յաղացէր:

բժիշկ Ժազէքինէ Ցիւրխեր. Անկիւրիոյ վիլայէմիթի Անսարիա քաղաքում վարիչն է Պրօդրոմոս. Պարակաստանի Աւրմիա քաղաքում պատոր Հանչ Գիշէր, Տ. Էլէ Գիշէր, օր. Մարի Պաւլատ, օր. Մարգարիտէ Պամայէլ և Բուլլարիոյ Առնա քաղաքում, ուր վարիչներ են պատոր Արրահամ Ամիրիսանեանց, օր. Ամիրիսանեանց և օր. բժիշկ Մէլիք—Բէգլարեան:

Բեռլինի կենդրուական յանձնաժողովը ցարդհաւաքել է 350·000 մի կլորիկ գումար, և մենք ուրախ ենք, ասում է մայիսի 10-ին ճաշից առաջ և յետոյ գործի բարեկամների նեղ շրջաններում ժողովներ են տեղի ունենում իսկ եկեղեցական մի մեծ հասարակական միտմնդ է տեղի ունենում. Այսուեղ զեկուցումներ են լինում Անգլիոյ, Գերմանիոյ, Ֆրանսիոյ, Միացեալ նահանգների, Զուիցերիոյ և Բելգիոյ յանձնաժողովների հայոց նպատակներու գործունեութեան մասին. Այս ժողովն մեր հայրենակիցներից ներկայ են եղել Մինոս Զերադ և Թումայեան, Ալբրին երկու տարիները Խորոպահից և Ամերիկայից մօտ 6 միլիոն մարկ է հաւաքուել:

Գերմանիան նուիրել է մէկ միլիոն մարկից աւելի, Գերմանիան Խարբերդի, Հալեպի, Բուլղարիոյ և Պարսկաստանի Տաճկահայ տառապեալներին օգնելուց ի զատ, ամենց աւելի նուիրել է իրեն որբերի խնամելու գործին և 1300 որբից աւելի այժմ խնամուում են Գերմանացւոց նպաստներով, Ծափահարութեամբ ընդունել են կեպիտուսի Գերմանիայ մասին տուած զեկուցումը. որովհետեւ Անգլիայում էլ, ասում է 1. գիտեն զանազան ներկան տպաւորութիւն է թողել Ծարմետանը իւր պերճախօսութեամբ, իսկ Ֆրանսիոյ բողոքաներների կողմից եկած պաստոր Ապպեան երիտասարդական կրակով ունկնդիրներին ապուշ կրծեց:

Ցաջորդ օրը մի նեղ շրջանում որոշում են հայոց բարեկամները շարունակել միմեանց հետ սերտ յարարերութիւն և ընդհանուր ուժերով նըսպատի գործը յառաջ տանել, Երեկոյեան արտասահմանից հիւրերին հրաւիրեց Անգլոհայկական ընկերութեան նախագահ և պարլամենտի անդամ Ստեփանսըն, Լեպահիւսը և ունդունում քրիստոնեայ երիտասարդների ընկերութեան մէջ հայոց մասին մի զառափառութիւն է կարգում, և Անգլիական—Պարկում Գերմանացւոց մի բացօդեայ միտման խօսում է մի ճառախօսի առաջարկած այս խնդրի մասին մէկ «Աւ էք կամենում ծառայել» Աստուծուն թէ մամնային. ունկնդիրների ընկնից իսկոյն լսուեցաւ պատասխանը, թուրքին,

Վերիսհովենում (Քաղաքիա) վախճանեցաւ Պատեր Կնեայզը, որ մեծ հոչակ էր ստացել ջրառուժական նոր եղանակ մոցնելով բժշկականութեան մէջ, Կնեայզը ձնել է 1821 թուին. մինչև 21 տարեկան հասակը ոստանայնկութեամբ էր պարապում: իսկ յետոյ զրաղուեցաւ աստուածարանական գիտութիւններով և 1852 թուին քահանայ ձեռնադրուեցաւ: 1848-ին հիւանդացաւ և ջրառուժութեամբ առողջանալով, իւր կեանքը այդ ձիւղին նուրիեց և մեծ ծառայութիւն մատոյց բազմաթիւ հիւանդներ բժշկելով ջրով: Նորա երկասիրութիւնը փամ ջրաբուժութիւնը: վերնագրով 50 հրատարակութեան արժանացաւ և նորա միւս երկասիրութեանց հետ օտար լեզուներով էլ հրատարակուեցաւ: Կնեայզի եղանակը, չնայելով որ շատերը համակարծիք չեն նորան, գրեթէ ամեն տեղ տարածուել է և մեծ բազմութիւն հիւանդների դիմում է ջրաբուժութեան այդ եղանակին:

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Ե. Դօլգանօվ՝ հրատարակել է մի զիբք Страна Ֆիօնօվ (Եթովպացոց աշխարհ) Խորագրով, ուր հեղինակը աշխատում է ցոյց տալ, որ քրիստոնէութիւնը վերջնականապէս հաստատուել է այդ երկըրում չորրորդ դարու սկզբներին: Եթովպական եկեղեցին իւր եպիսկոպոսները ստացել է Աղեքսանդրիոյ պատրիարքից, որին և ենթարկուած էր, Բայց աշա լոյս է ընկնում Եւտիքական աղանդը, որի աղմուկները հասան մինչեւ այս հեռաւոր աշխարհը: Եգիպտոսում քրիստոնէից կէօր Գիոսկորոս պատրիարքի հետ ընդունեցին Եւտիքէսի փարտապետութիւնը: Եղեքսանդրիոյ պատրիարքութիւնը, ընդունեցին բաղադրիութեան տական էր կուպութեան և կուպութեան տական էր կուպութեան և կուպութեան: Այդ ժամանակներում Եթովպական եկեղեցին Պիոսկորոսի իրաւասութեան տակն էր և նա էր նշանակում եպիսկոպոս: Այն ինչ եւտիքականութիւնը բուռն հակառակութեան հանդիպեցաւ Հարեց շատանում: Հետեանքն այն եղաւ, որ ժողովուրդը մնաց օրինադրու իսկ նուրիապետութեան բարձրագոյն անդամները աղանդաւորներ համարուեցան: Այժմ Կոպտ—եպիսկոպոսին տրուում է միայն փարչական իշխանութիւնը: Նա ժողովրդի հոգու վերայ ազգեցութիւն չունի: Քարձագոյն հոգեւոր իշխանութիւնը նկքը իւր համար առանձին է, իսկ ժողովուրդը առանձին: Այս հակառակութիւնը հաշտեցնելու համար, եպիսկոպոսից զատ կայ մի ուրիշ հոգեւոր անձն ընտրուած էնց ժողովրդից, որ մի և նոյն ժամանակ հոգեւոր կուրուն չունի և կոչուում է չակկէն: Այս շատ հնուց մնացած մի կարգ է, որով կան նեկուս: Կոպտ—եպիսկոպոս: չակկէն՝ Եթովպացի: Այս երկը անձանց ձեռքն է և երկրի ամբողջ իշխանութիւնը և կառավարութիւնը, Եթովպիսն իի է անապատական—ճգնաւորներով, և այս վերջիններից էլ ընտը-

րուում է չակկէն: Դրա համար գնում են անտառ կամ անապատ, որուում են մի անապատական լուսնութիւն և մազերը կտրում, ոտների և ձեռների ճանկաձեւ եղունկները կտրում հաղցնում են թանկազին շորեր և տանում են թագաւորի մօտ, և ահա կիսամերկ ճգնաւորը փասահեղ զգեստներից զարդարուած դառնում է երկրի զիլաւոր իշխանաւորներից մինը: Եթովպական եկեղեցում դարձրէ ի վեր գոյութիւն ունին երեք աստուածարանական տարրեր դպրոցներից, որոնց զիլաւոր տարբերութիւնը Բանին ևստուծոյ մարդկային բնութեան վերայ է:

Տամն և հինգ տարի առաջ հանգուցեալ ներկուսը կազմել էր մի ժողով, հրամիրելով երկրի գպրոցների ներկայացուցիչներին: Այս ժողովում վիճարանութիւններ էին լինում իրար համոզելու հայեացքների միութիւն հաստատելու նպատակով: Երկար վիճեցին, և ահա յանկարծ վէճի տաքացած բոպէին եպիսկոպոսներից մինը կատաղած բացականչեց ուղիղ նեկուսի երեսին: «Ցիսու Քրիստոս էլ ինձ ու քեզ պէս մարդ էր»: Նեկուսը բարկացաւ և հրամայեց այդ յանդուդն հոգեւորականի լեզուն կտրել, օրով և վերջացան վիճարանութիւնները: և իւրաքանչիւրը տուն վերադարձաւ առանց մազաչափ իւր համոզումը փոխելու:

ԲԱԺԻՆ ՀԵԹՈՆՈՍՈՒՑ.

Քրիստոնէական քաղաքակրթութիւնը արագ քայլերով մուտ է գործում հեռաւոր արեւելքում: Այդ երկիրների թուումն է և Սիամը, որ իւր ութմիլին բողայական կրոնին պատկանող բնակիչներով: շնորհիւ իւր տաղանդաւոր Զուլալոնդկորն թագաւորի յառաջադիմում է և քաղաքակրթուում Սիամի հրաշալի կլիման, հարուստ թուութիւնը և աշխարհագրական յարմար զիբքը մեծ ապագայ է խոստանում այդ երկրին: Այժմ Սիամի թագաւորը ճանապարհորդում է և այցելում է Եւրոպական տէրութեանց: Առաջին այցելութիւնն նա արեց թագաւոր կայսեր և թէ Պատմութիւնը և թէ Սուկուայում փառաւոր ընդունելուութիւն գտաւ Նորի Մեծութիւնն կոզմից: Որին թագաւառանց ժամանակ արած մեծ ճանապարհորդութիւնն միջոցին առիթ էր ունեցել ընդունելու և հիւրասիրելու իւր երկրի մէջ: Երկու մայրաքաղաքների մէջ Սիամի թագաւորը այնպիսի մի սիրալիք և հիւրասէր ընդունելութիւն տեսաւ, որ Ոսկու այժ քաղաքազը խորհութիւնը չուրիշ չակկան կայալութիւնը յայտնելիս ասաց, թիւր ցոյց տուած հիւրասիրութիւնը թագաւոր կայսեր մի ստուեր միայն կարելի է համարել այն հիւրասիրութիւնն իշխանութեամբ, որ նա վայելեց նորին Մեծութիւնից: Չուլալոնդկորն թագաւորը մեծ բարեկարգիչ է իւր երկրի համար: Նա վերացըրել է ստրկութիւնը և այնպիսի բարենորոգումներ արել, որով Սիամը առաջնակարգ տեղ է լունել այժմ միւս ասիական բոլոր տէրութեանց շարքում: Այս ճանապարհորդութեան և այցելութեանց աղդեցութիւնը անշուշտ ևս առաւել բարերար կլինի Սիամի համար: